ՀՏԴ : 929:78.071(479.25) Ռոբերտ Աթայան + 78(479.25)

ՌՈԲԵՐՏ ԱԹԱՅԱՆ *(հրատարակության պատրաստեց, ծանոթագրեց և առաջաբանը գրեց Լուսինե Սահակյանը), Երևան, հեղ. հրատ., 2021, 352 էջ*:*

Բանալի բառեր՝ Ռոբերտ Աթայան, Լուսինե Սահակյան, կոմիտասագիտություն, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, արխիվային վավերագրեր, նամականի:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի գիտական խորհրդի որոշմամբ լույս է տեսել «Ռոբերտ Աթայան» գիրքը (խմբագիր՝ Գուրգեն Գասպարյան)՝ նվիրված հայ երաժշտագիտության երախտավոր, կոմիտասագետ, կոմպոզիտոր, երաժշտա-հասարակական գործիչ և մանկավարժ Ռոբերտ Աթայանին (1915–1994), նաև՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հիմնադրման 100-ամյա հոբելյանին, ինչը միանգամայն տրամաբանական է, քանի որ պրոֆեսոր Աթայանը երկար տարիներ ոչ միայն դասավանդել է կոնսերվատորիայում, այլև ղեկավարել երաժշտության տեսության ամբիոնը: Այսօր մեր՝ միջին և ավագ սերնդի գրեթե բոլոր երաժշտագետները նրա սաներն են: Անձամբ ինձ նա «Սոլֆեջիո» է դասավանդել Կոնսերվատորիայի առաջին կուրսում, իսկ մինչ այդ՝ 1987-ին, երբ ավարտում էի Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանը, նա ավարտական քննական հանձնաժողովի նախագահն էր: Հենց այդտեղ էլ կայացավ մեր ծանոթությունը, որն ավարտվեց պրոֆեսորի կողմից իմ պատասխանի գերազանց գնահատականով...



Ռ. Աթայանի գիտական գործունեությունը սերտորեն շաղկապված է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հետ. նա 1948-ին ավարտել է ՀՍՍՀ ԳԱ արվեստների պատմության և տեսության սեկտորի ասպիրանտուրան՝ սեկտորի 1944–1948 թթ. վարիչ, ականավոր երաժշտագետ Քրիստափոր Քուչնարյանի գիտական ղեկավարությամբ 1954-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Հայկական խազային նոտագրությունը» թեմայով և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան:

Ռ. Աթայանը կանգնած էր ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի հիմնադրման ակունքներում: ՀՍՍՌ ԳԱ նախագահության որոշմամբ 1958-ի մայիսի 1-ին ստեղծվեց Արվեստի ինստիտուտը՝ Երաժշտության, Ճարտարապետության, Թատրոնի և կինոյի, Կերպարվեստի, Կիրառական արվեստի սեկտորներով: Արժանահիշատակ է, որ Երաժշտության սեկտորի հինգ աշխատակիցներից մեկը հենց Ռ. Աթայանն էր, ով աշխատեց հարազատ գիտական օջախում

* *Ներկայացվել է 13. VII. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

մինչև ԱՄՆ տեղափոխվելը: Հենց այստեղ նա ստեղծեց իր կարևոր երաժշտագիտական աշխատությունները՝ «Արմեն Տիգրանյան. կյանքը, երաժշտական-հասարակական գործունեությունը և ստեղծագործությունը» (համահեղինակ՝ Մաթևոս Մուրադյան, 1955), «Հայկական խազային նոտագրությունը (ուսումնասիրության և վերծանության հարցեր)» (1959) և «Գուսան Հավասի (կյանքը և ստեղծագործությունը)» (1963) մենագրությունները, «Երաժշտության տարրական տեսություն» (համահեղինակ՝ Տիգրան Տեր-Մարտիրոսյան, 1980) դասագիրքը երաժշտական ուսումնարանների համար և այլն:

Գրախոսվող գրքի գաղափարը պատկանում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի դոկտորանտ, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի անդամ, ՀՀ գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) գիտական խորհրդի անդամ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Լուսինե Սահակյանին: Նա էլ գիրքը պատրաստել է հրատարակության, ծանոթագրել և հեղինակել առաջաբանը:

Լ. Սահակյանը երկար տարիներ զբաղվում է Կոմիտասի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրության հարցերով: 2007-ին Արվեստի ինստիտուտում նա հաջողությամբ պաշտպանեց «Կոմիտասագիտությունը հայ երաժշտագիտության մեջ» թեմայով թեկնածուական ատենախոսությունը (գիտական ղեկավար՝ Արաքսի Սարյան), որը 2010 թ. հրատարակվեց մենագրության տեսքով: Իր անդրանիկ մենագրության մեջ հեղինակը ներկայացրել է հայ երաժշտագիտության կարևոր բնագավառներից մեկի՝ կոմիտասագիտության կազմավորման, հետագա ծավալման և հաստատման փուլերը՝ մեկտեղելով և ի մի բերելով Կոմիտասի կյանքն ու գործը լուսաբանող հիմնական աշխատությունները: Հետագայում Լ. Սահակյանը հետևողականորեն շարունակեց իր պրպտումները կոմիտասագիտության ասպարեզում՝ հրատարակելով գիտական մի շարք արժեքավոր հոդվածներ և զեկուցումներով հանդես գալով Հայաստանում ու արտասահմանում (Ռուսաստան, Գերմանիա և այլն) գումարված միջազգային գիտական կոնֆերանսներում:

Երաժշտագետի՝ կոմիտասագիտական պրպտումների հանրագումարը դարձավ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի գիտական խորհրդի որոշմամբ 2019-ին՝ Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանի կապակցությամբ հրատարակած «Կոմիտաս Վարդապետ» հոդվածների ժողովածուն, որտեղ ներառվեցին հեղինակի՝ տարբեր տարիների հրատարակած հայերեն և օտարալեզու հոդվածները:

2020-ին՝ կոմիտասագիտության մեջ ծանրակշիռ ներդրում ունեցող Ռոբերտ Աթայանի ծննդյան 105-ամյակի կապակցությամբ ծնվեց նրա վերաբերյալ ժողովածու ստեղծելու գաղափարը, որը, ինչպես խոստովանում է Լ. Սահակյանը՝ «Իմ մեջ արմատացրեց Տիգրան Մանսուրյանը: Կոմպոզիտորի արժեքավոր մասնագիտական խորհուրդները մեկնակետ դարձան այս աշխատության համար» (էջ 7): Իսկ աշխատության հուսալի հիմքը Ռ. Աթայանի արխիվի մանրազնին ուսումնասիրությունն էր, որը Լ. Սահակյանին սիրահոժար տրամադրեցին Ռ. Աթայանի ժառանգները. դուստրերը՝ Մարինե և Նազելի Աթայանները, թոռը՝ Արշակ Աթայանը և հարսը՝ Թամար Աթայանը:

Երկար տարիներ աշխատելով ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում՝ Ռ. Աթայանն իր անգնահատելի նպաստն է բերել կոմիտասագիտության առաջընթացին ոչ միայն իր՝ կոմիտասագիտական մեծարժեք հետազոտություններով, այլև բացառիկ դեր կատարել Կոմիտասի ժառանգությունը Հայաստան տեղափոխելու և նրա «Երկերի ժողովածուի» ակադեմիական հրատարակության նախապատրաստման գործում: Ինչպես հայտնի է, 1949 թ. սեպտեմբերի 26-ին՝ Կոմիտասի ծննդյան օրը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում է ընդունում Կոմիտասի «Երկերի ժողովածուի» ակադեմիական հրատարակության մասին, որի իրագործումը հանձնարարվում է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիային: Կոմիտասի ձեռագրերը Երևան տեղափոխելու նպատակով սկսվում է նամակագրություն ՀՍՍՀ ԳԱ արվեստների պատմության և տեսության սեկտորի վարիչ Ռուբեն Զարյանի և երգչուհի, դաշնակահարուհի, երաժշտագետ ու մանկավարժ Մարգարիտ Բաբայանի միջև, որի արդյունքում ստացվում է «Կոմիտաս» խնամատար հանձնաժողովի տրամադրության տակ գտնվող կոմիտասյան արխիվի նշանակալի մասը:

Մ. Բաբայանի հետ նամակագրությունը հետագայում շարունակում է Ռ. Աթայանը. այդ անտիպ նամակներն այսօր գտնվում է ԳԱԹ Մ. Բաբայանի ֆոնդում: Աթայանի ջանքերով հետագայում հրատարակվեց Կոմիտասի «Երկերի ժողովածու»-ն, որի 1–6 հատորների խմբագիրը հենց ինքն էր: Ցավոք, մնացյալ 7–14-րդ հատորները հրատարակվեցին հետմահու՝ Գևորգ Գյոդակյանի ջանքերով: Կոմիտասի «Երկերի ժողովածու»-ի ակադեմիական հրատարակությունը ոչ միայն բացառիկ իրադարձություն էր հայ ժողովրդի երաժշտական կյանքում, այլև ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող համազգային մեծ ու նշանակալի երևույթ:

Ռ. Աթայանի անձնական արխիվի ուսումնասիրության արդյունքում կուտակվում է մեծաքանակ նյութ: Ինչպես նկատում է Լ. Սահակյանը, «Այս գրքում փորձեցինք հավաքել Ռ. Աթայանի բազմոլորտ գիտական և երաժշտալուսավորական գործունեությունը ներկայացնող նյութերի մի ծաղկաքաղ» (էջ 8):

Գրախոսվող ժողովածուի կարևոր արժանիքներից մեկն այն է՝ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվել Աթայանի ձեռքով գրված «Ինքնակենսագրություն» վերնագրված կենսագրությունը (էջ 13–17), որը լույս է սփռում երաժշտագետի գործունեության՝ մինչ օրս անհայտ էջերի վրա: Ռ. Աթայանի վաստակն օտարալեզու ընթերցողին հասանելի դարձնելու նպատակով այն ներկայացվել է նաև անգլերեն թարգմանությամբ (էջ 17–20):

Կարևոր նշանակություն ունեն Աթայանի հաշվետվությունները երաժշտահասարակական (էջ 20–21) և 1975–1985 թթ. գիտական գործունեության վերաբերյալ (էջ 21–26), ինչպես նաև՝ «Զեկուցումը ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի նիստում», որն ընթերցվել է 1984 թ. մայիսի 27-ին (էջ 26–27):

Ժողովածուի առանցքը «Ռոբերտ Աթայանի աշխատությունները» բաժինն է (էջ 28–182), որտեղ ներկայացված են Աթայանի՝ 1954-ին պաշտպանած թեկնածուական ատենախոսության «Կոմիտասի երաժշտագիտական գործունեությունը և խազաբանությունը» արժեքավոր հատվածը, Կոմիտասին («Նոթեր Կոմիտասի երաժշտական-ազգագրական աշխատանքի և ստեղծագոր-

ծության մասին», «Ղարաբաղյան հորովելները Կոմիտասի գրառումներում», «Կոմիտասի շեքսպիրյան էջը», «Կոմիտասի նշանակությունը հայ արվեստում», «Կոմիտասը հայ ժողովրդական երգերի հավաքող»), հայ դասական կոմպոզիտորներին («Մակար Եկմալյանը և իր Պատարագը», «Ռոմանոս Մելիքյան», «Անուշավան Տեր-Ղևոնդյանի ստեղծագործությունը», «Աշոտ Սաթյանի երգերը», «Վարդան Սարգսյանի «Անուշը»»), ինչպես նաև երաժշտության տարբեր ճյուղերին («Հայ ժողովրդական և հոգևոր երաժշտություն», «Ժողովրդական երաժշտություն», «Հայ աշուղների երգերը», «Վաղ միջնադարյան հոգևոր երգեր», «Գործիքային երաժշտություն», «Միջնադարի հայ վարպետների երգերը»), երաժշտատեսական տարաբնույթ հարցերին («Հայերեն երաժշտական տերմինաբանության մասին», ««Ռաբիս» կոչվող երգերի մասին» և այլն) վերաբերող նրա հոդվածները, չհրատարակված զեկուցումների ու ելույթների տարբերակները:

Գրախոսվող ժողովածուի կոմիտասյան շունչն առկա է հաջորդ բաժնում ևս, որտեղ ի մի են բերված Կոմիտասի մասին Ռ. Աթայանի հավաքած նյութերը (էջ 183–242)՝ վկայականները, կոնդակները (էջ 183–189) և նամականին (էջ 189–242): Արժեքավոր նամականին բաղկացած է չորս բաժնից՝ ա) «Կոմիտաս Վարդապետի գրած նամակները», բ) «Կոմիտաս Վարդապետի ստացած նամակները», գ) «Կոմիտաս Վարդապետի վերաբերյալ այլ անձանց նամակները» և դ) «Ռ. Աթայանի գրած և ստացած նամակները»:

Կարծում ենք, որ անհրաժեշտ է Ռ. Աթայանի նամականին ամբողջացնել և հրատարակել առանձին հատորով:

Աթայանական «կոմիտասականի» կարևոր էջերից մեկն էլ ներկայացնում է Կոմիտասին նվիրված նրա՝ օտարալեզու ուսումնասիրությունները. Մոսկվայում 1964 թ. կայացած Մարդաբանական և ազգագրական գիտությունների VII միջազգային կոնգրեսում նրա՝ «Կոմիտասը հայ ժողովրդական երգերի հավաքող և ուսումնասիրող» ֆրանսերեն զեկուցումը (էջ 262–268), «Կոմիտասի կյանքը» գերմաներեն հոդվածը (էջ 268–273), «Կոմիտաս» ծավալուն ռուսերեն հետազոտությունը (էջ 273–285), ինչպես նաև Կոմիտասի 100-ամյակի կապակցությամբ անգլերեն հրատարակված «Կոմիտաս» արժեքավոր ուսումնասիրությունը, որտեղ ներառված են ինչպես նոտային օրինակներ, այնպես էլ՝ Կոմիտասի լուսանկարներն ու ինքնադիմանկարները (էջ 286–313):

Լ. Սահակյանը ժողովածուում ներառել է նաև Ռ. Աթայանի մասին ժամանակակիցների՝ երջանկահիշատակ ականավոր երաժշտագետներ Ռաֆայել Ստեփանյանի և Գևորգ Գյոդակյանի տպագրած հոդվածները, ինչպես նաև՝ հատուկ այս ժողովածուի համար Դավիթ Ղազարյանի, Լիլիթ Երնջակյանի, Դավիթ Դերոյանի, Դանիել Երաժշտի և Արզաս Ոսկանյանի՝ հետաքրքիր ու ջերմ զգացումներով համակված հուշերը:

Գրախոսվող ժողովածուի աներկբա արժանիքներից է Ռ. Աթայանի գիտական աշխատությունների ու ստեղծագործությունների մատենագիտական ցանկը, որը կազմել և առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել Լ. Սահակյանը:

Ընթերցողը մեծ հետաքրքրությամբ է ծանոթանում Աթայանի անձնական արխիվից վերցված, լուսանկարներից կազմված պատկերաշարին:

Այսպիսով՝ Լ. Սահակյանի աշխատասիրությամբ և նրա կյանքի ընկերոջ՝ գնդապետ Մհեր Ավագյանի մեկենասությամբ լույս աշխարհ եկած «Ռոբերտ Աթայան» ժողովածուն ոչ միայն հուշարձան է կոմիտասագիտության սյուներից մեկի՝ Ռ. Աթայանի հիշատակին, այլև Լ. Սահակյանի հերթական խոնարհումը Մեծն Կոմիտասին: Ժամանակին ամերիկահայ կերպարվեստի ինքնատիպ դեմքերից մեկը՝ Քաջազունի Քեչեճյանը (գեղանկարչական աշխարհում հայտնի Քաջազը), նկատել է. «Եթէ նոյնիսկ Նիւ Եորք նկարեմ՝ Երեւան կը ստացուի, եթէ ամերիկացի նկարեմ՝ հայ կը ստացուի ...»: Ու եթե վերաձևակերպենք Քաջազի միտքը, ապա կարող ենք վստահ արձանագրել՝ ինչի մասին գրում և հրատարակում է Լ. Սահակյանը, ստացվում է ԿՈՄԻՏԱՍ:*

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Արվ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, երաժշտության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունը՝ նոր և նորագույն շրջանի հայ երաժշտության ուսումնասիրություն: Հեղինակ է 12 մենագրության և ավելի քան 230 հոդվածի: instart@sci.am, annaasatryan@gmail.com

* Ա. Աղասյան. Քաջազի մշտավառ կանթեղը, Երևան, 2009, էջ 5: